

ԷՐՎԱՐԴ Մ. ԲԱՂԻԱՍԱՐՅԱՆ

ՄԻՋԱՌԱՐՅԱՆ ԽՐԱՏԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Խրատն, ընդհանրապես, իրուն հասարակության, անհատի բարյական դաստիարակության միջոց, սկիզբ է առնում մարդկության բաղաքակրթության հետ միաժամանակ: Հայունի են թիճ և միջնադարյան ամենատարբեր լեզուներով ու խմբագրություններով մեզ հասած բազմաթիվ խրատներ, որոնց մի մասը մեծ տարածում է գտնել բազմաթիվ ժողովուրդների մոտ: Այդպիսի նշանակող խրատական գլուխ-գործոցներից են Խիլարի խրատների ժողովածուն, Նուշիրվանի խրատները և այլ ժողովածուներ: Սրանց մեջ հիմնականում բարովզում են իմաստության, բարության համամարդկային գաղափարներ, որով և թերևն պիտի բացատրել երանց տարածումը՝ զարգացման անհամաշահ մակարդակ և ազգային ու կրթական ամենատարբեր կազմ ունեցող երկրներուն: Այդ խրատների ընորու կողմերից մեկն էլ ան է, որ սկիզբ դրին գրական նոր տեսակի, խրատական ժամերի: Սակայն, խրատական բովանդակությունն ունեցող երկերը ուղղակիորեն չեն առնչվում այդ ժամերին:

*

* *

Խրատը միջնադարում որոշակի չի առանձնացվել: Հայ մատենագրության մի այնպիսի բաշատելյակ հեղինակ, ինչպիսին Կիրակոս Գանձակեցին է, թվայով Միհրար Գոշի խողած գրական հուշարձանները, գրում է. «Եթող նա յարձան և իշխառակ գերեզմանի գիրս իմաստախոն» յօդուս իմաստափրաց, համառու մարդկության երեմիաց՝ զեղեցկացիր կարգօք, և սու ինչ կանոն վասն սպասաւորելոյ մարմնոյ և արեան Տիառն, թէ որպէս պատշաճ իցէ կամ

որպիսի կարգօք, և գիրք մի որք ի վերայ բնութեան՝ ի դիմաց Եւայի՝ առ դատերս նորա, և գիրք մի յայտարարութիւն ուղղափառ հասատոյ՝ լնողէն անձնական մերձուածոց, ի խնդրոյ մեծ օրավարին Զաքարէի և եղօր իրոյ, և այլ բուլղաս խրատական»: Ուշագրավ է, որ նայագետն Հ. Հ. Տաշյանը հնարավոր է համարում, թէ Կիրակոսի վերևուն նօշ-ված «քույշոս խրատական» գրությունների մեջ, բացի զուտ խրատական գործերից, կարող են համաց-վել նաև Գոշի մուս գործերը, որոնց մասին դարձյալ ակնարկում է Կիրակոսը. «ցանկացան մա հմտու լի-նել գրոց սրբոց և առակաց խորնոց, որ կան ի նու-աս» որ անհմենաց բուլղոս խրատական» բառերուն նետ կրնայ առնուի Գոշի առակներու հաւաքում մը յօրինելու իմաստով²:

Այսուել ոչ միայն խրատները, այլև բազմաթիվ այլ արձակ գործեր ժամարդին համանման չեն ենթարկվում: Ավելին, բազմաթիվ տարրեր բնույթի և բովանդակության ստեղծագործություններ համարում են լուսատներ:

Եվ իրոք, եթէ միջնադարյան արձակի բնագավառում երթևն խիստ հմգար է, ժամանակակից հասկացողությամբ, առանձնացնել տարրեր ժամարդին ասուղամեղության գործեր, ապա այդ առավել ևս դմիւր է խրատների հարցում:

Ի՞նչ է խրատը: Ընդհանուր առամար բուրաբանուր գրավոր կամ բանակիր աղբյուր նետելյալ պատասխանն է տալիս. «Հրաման, կրթութիւն դաստիա-

¹ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, Վենետիկ, 1865, էջ 115:

² Հ. Հ. Տաշյան, Ժողովածոյք առակաց Վարդանաց, Վիեննա, 1900, էջ 16:

բակուսիմ».³ («Սնուցանիշիք զետա (զորդիս) խրատու և ուսմամբ Տևառն») նաև՝ խորհրդող («Եյսպէս տառ թզ խրատ»), ինչպէս և ուսման, մակացրոին, գիտութիւն. (քերականութեան, և ճարտասանութեան և այլոց համարոյ խրատու տեսուածք»⁴, կամ «Պատուիք, հրամանգ, ... Խմատալից խօսք առածի ձևով,... Ուսուցանելու դաստիարակիու միջոցը հիմ ժամանակ, պատիծ, ծեծ, խատութիւն»⁵: Միջնադարյան հայ մատենագրության մի պամախի կողով, ինչպիս Մովսես Խորենացուն վերագրվող Պիտոյից գիրքն է, պատկան է բնութագրություն խրատները. «խրատ է բան բացատրեամբ գիտարելի, յորդորելով ինչ, և կամ հրամարեցուանուղիք»⁶:

ԺԳ դարի հշանակով հայ խրատագիր Հովհաննես Երգեկացին (Պլուզ), մի աղիթով խուելով առակի առանձնամատկության մասին, տալիս է մի ձևակերպում, որը որոշ չափով վերաբերում է նաև խրատական գրություններին:

«Արդ, ամենայն գիրք աստուածային առանձին անուադութեամբը յարդեանցն և յիրացն կոչեցան, որպէս Ե գիրքն, Մովսեսի Պատմութիւնն Արարածոց, Մովսեն և Եղիշ և այլով անուամբն մակագրեցան, Արմանակը և այլ գիրք մարգարեկիցն, և պատմութիւնը թագաւորացն, և ի նորս Անեստարանն փրկչին մերոյ թիսուի Քրիստովի:

Արդ, ի սոցան: ուսաներ յանուն պատմողացն կոչին, և նա, որք յիրացն և յարդեանցն և ի գործոցն զանուանցն կոչումն յինքեան: Խակ Սոլոմոնի գիրքս, ոչ այնպէս, այլ առակը անուանեալ կոչի, զի ո՞չ միոյ յիրացն հշանակէ, այլ զանուանցն խրատ իմաստութեան և խորհրդոյ ունի յինքեան: Եւ ո՞չ միայն մարգարեկութիւն է և ոչ յատուկ պատմութիւն, զի ոչ հացեանց առ մարգարեկութիւն և ոչ թագաւորութիւն, այլ խմելեաց զիմաստոյթիւն, որ զանուանցն տևակը բարութեան զինքեան պարտանական ունի»⁷: Այսուհետև Երգեկացին բացատրում է նաև, որ առակների խմատը չափով է ուղղակի հասկանա, այլ պարանորեան:

Այս բնորոշումը մեծ չափով համապատասխանում է նաև խրատական բնույթի գործերին: Իրոք, խրատը և որոշակի հարցի չի ընդիլուս, այլ ինչպէս առակը «զանուանցն խրատ իմաստութեան և խորհրդոյ ունի յինքեան»: Դրանում համոզվելու հնամար բավական է դիմել մենց իր՝ Երգեկացոյ խրատական գործերին, որոնցու շշափկում են ամենաբազմազան հարցեր, ցան որում, հայած հանգամանքներին, այդ ամենը երեւն մատուցվում են իրեւ խմելանք, երեւն՝ խրատ, երեւն կարգադրություն և այլն: Հիմնական տարրերությունը տերևս հրանում է, որ խրատի ի-


մատը պետք է ուղղակի հասկանալ և ոչ այլարանությամբ:

Մյուս կարևոր եւրակացությունը՝ վերը քրիված նաւզամից այն է, որ միջնադարում գրական, գիտական երկերը տարրեր «մանրերի» էին բաժանվում ոչ այնքան իրենց կառուցվածքային ձևի, որքան բոված դակության առումով:

Այս հանգամանքները կարևոր ենք համարում միջնադարյան բազմաթիվ ճառուի ու բարողների շարքում խրատական բնույթ ունեցողները զատորշելու համար:

Միջնադարում խրատները տարրեր խմբերի են բաժանվել: Պիտոյից գրքում նրանք անշատված են մետավառ կերպ. «Եւ խրատու ունի է բացատական, որպէս. Պէտք են ընչից: Եւ ունի է հրամարական, որպէս Ոչ է պարտ զանուանք գիշերն քննել: Եւ ունի յորդրական, որպէս պարտ է յաղքատոթենել: Փախչել: Եւ ունի պարզ. Մի հաւ՝ քաջ: Եւ ունի շարալուակ: Ոչ ի բարուր բազմիշխանութիւն, մի իշխան և լույսից: Եւ ունի առականիրազ: Ոչինչ տկարագոյն երկիր սեղուածէ քան զմարդ: Արդ զանազանութիւն այս է խրատու»⁸:

Հետաքրքիր է, որ դասական այս բաժանումը պահպանվել է նաև 1817 թ. գրիված մի ձեռագրում, աղյուսակի ձևով⁹:



Ուշադիր դիտելու դեպքում դժվար չէ հասուլվել, որ ինչպէս Պիտոյից գրքում, այնպէս էլ աղյուսակում եղած տևակները կարելի է միավորել երեք հիմնական խմբերի մեջ: Երգեկացին հենց այդպես էլ անում է՝ ըստ նրա խրատները բաժանվում են հետևյալ խմբերի:

ա) Հորդորական, բ) հրամարական, և գ) միջակային.

«Եւ գիտելի է, զի ամենայն խրատ կամ յորդրական է, կամ հրամարական և է, որ միջակարար ունի: Եւ պարտ է, որ յորդորէ յիրս, նախ զգեղեցկութիւն նորին գովութեամբ ներռողեալ ցուցանի և զագուականութիւն փառաց և պատույ նորին նազելի առնի, որպէսզի ի ցանկութիւն զմիտս լսողին շարժից: Խակ յորմէ հրամարեցուանէ զընդիմական նորա

³ Բաղդիք Հայկագեան լեզուի, Վենետիկ, 1886, էջ 992:

⁴ Ստ. Մայլասանեանց, Հայերն բացատրական բարարան, թ. Բ, Երևան, 1944, էջ 808:

⁵ Յաղագ Պիտոյից, Վենետիկ, 1865, էջ 856:

⁶ Ստո. ձեռագիր № 2173, ժԴ դ., էջ 868ը, «Նորմ Ցոհանիսի Երգեկացոյ, ի սույր առաքեալս...»:

⁷ Անդ, էջ 864ա:

⁸ Յաղագ Պիտոյից, Վենետիկ, 1865, էջ 856:

⁹ Ստո. ձեռ. № 853, էջ 296ա:

և զվաճակ մետունողաց նորին երևողությանը որոյ կարծեաք բարձրին բուեցնալ լիներ, իսկ միջակ է, որոյ դեմքը ոչ է լավունի, այլ հասարակաբար զարտառական բանն ստացի դմել»¹⁰:

Խրատի ընդարձակ հասկացողությունը երեւ մի կողմից հանարավոր է դարձնում խրատական գործերի բազմազանությունը, մյուս կողմից օրինաչափ է դարձնում այն համաժամանքը, որ խրատական գործերի համար իրոք ատաղձ ծառապես ամենաբազմազան զութքը: Եվ իրոք, Օրանց համար աղբյուր են հանդիսացել Աստվածաշումը, և Կանոնագիրը, և ըլքը ու ուժամանակից վարդապետների երկերն ու ասույցները, և իրական կամքից ամենատի ու սերունդների ստացած փորձը:

Խրատական գործերը հանդես են գալիս երեխներ կամունական գրության և երեխներ հարատական թրիքի (ուղղված որևէ անհատի կամ մի խումբ մարդկանց), երեխներ շշաբերական թղթի, իսկ երեխներ եւ բարողի կամ ծանրի ձևով:

Խրատների վերջին երկու տեսակը նորություն չեն և մեր մատենագրությունից կարելի է քերել բազմաթիվ օրինակներ:

Ի՞նչ վերաբերում է առաջին տեսակին՝ կանոնական թմբոյի խրատներին, զարգացում է ապրում մատևկապես 18-րդ դարից սկսած և օրա խոշոր երկայացուցիչներից մենքն է Հովհաննես Երգմանացին, ուստի մի փոքր կանգ առնենք պատմա-քաղաքական այն հանգամանքների վրա, որոնք պատճառ դարձնան և խթան հանդիսացան խրատների զարգացման և տարածման գործին:

*

*

Հայունի է, որ հայ ժողովրդի պայքարն իր գոյության համար արտահայտվել է ոչ միայն զիմանք դիմադրությամբ, այլև բազմաթիվ այլ միջոցներով, որոնք իրենց հշանակությամբ և հետևանքներով վճռական դարձն մեր մետաքա ողջ պատմության ընթացքում: Դրանց շարքում անվերապահորնեն դասվում է քրիստոնեության ընդունումը, հայ գրեթե գյուտը և այլն:

Սակայն միշտ չէ, որ պայքարն արտահայտվել է այդպիսի խոշոր երևությունունք: Երեխներ այն դրսեվորվել են որևէ գրական երկի կամ ծանրի ստացածմամբ:

5-րդ դարում, գրեթե գյուտից անմիջապես հետո, սկսվում է բուն թափով զարգանալ հայ պատմագրությունը, որի մապատակն էր ժողովրդի մեջ վառ պամիկ ազգային արժանապատվությունը, պատության և հայունասիրության ոգին:

Նույն երնույթը մկանելի է նաև 8-րդ դարում, երբ մի կողմից բյուզանդական նկանեցին, մյուս կողմից հոգ զանգվածներով Հայաստան թափանցող մահմե-

¹⁰ Մտղ. ձեռագիր № 2178, էջ 282ա, «Նորին Ցուհանիսի Երգմանականություն, ի ԽԶ սահմուն Դաւթի, ի մեկնողաց բանից յարմարեալ»:

դականությունը իրենց գաղափարահատություններով որոշակի սպառնալիք էին ներկայացնում Հայաստանին: Այս շրջանում է երևան գալիս Հովհանն Օհնեցոյ խմբագում կամունագիրը:

Անշուշտ, հասարակական կյանքի և օտար բնակչության դիմ միաձ պայքարի անհրաժեշտությունն էր ատիպի Մխիթար Գոշի Դատաստանագրի երեւան գալը Բացատրված Դատաստանագրի երևան գալը պատճառները, նա եղում է, որ Դատաստանագրի գիրքը գրվում է, որպեսզի նախ քրիստոնեաները ստիպված շինեն դիմելու օտար դատարաններին, և որպեսզի օտարները չմոլադրեն, չաղողն քրիստոնեաներին, այն բանի համար, թե երանք իր դատաստան չընեն:

Գոշը մերքում է քրիստոնեաների մինչ այդ դատաստան չունենալող մասին եղած մեղադրանքը, բայց միաժամանակ ցուց է տախի, որ իր օրոր նկեղեցական դատարանը, որ մենավոր էր զուտ Աստվածաշնչի բարոյագիտության վրա, այլև ամուս էր իր դեղու կատարելու տիրող բարեկի և մտայնության մետաներով: «Զի այժմ վասն ծոլոյթեան ոչ վարդին յօրենսն եւ ի մարգարէսն և յաւստարանն, զի ի նոցա գօրութենէն ընտրել կարիցն զուղի դատաստան: Վասն այնորի կամեցաք գրով դատաստանի զնոսա իրու ի քնն զարդուցանեն», կամ «Զի այժմ ոչ մերգործէ Հոգին սուրբ, որպէս ի Սահմուն կամ ի Դամիել, կամ որպէս ի Կորինթացին և յայլ ճշշմարին առնել դատաստան»¹¹:

Այսպիսով, Մխիթար Գոշի Դատաստանագրի երեխներ կալու միմնական պատճառներից մեկը քրիստոնեության բարոյականության և իրավական Ալբրության մեջ ամփութությունն էր: Եվ դա տեղի էր ունենում այն ծամանակ, երբ վաղուց ի վեր Հայաստանում գոյություն ուներ հայոց նկեղեցու կանոնագիրը:

Ամբողջ հարցը օրանում է, որ իմշալես Գոշի Դատաստանագիրը, այնպէս էլ կանոնագիրը լիովին կիրառելի կարող էր լինեն միանական պետականության պայմաններում, մի բան, որ Հայաստանում վաղուց ի վեր գոյություն չուներ:

Այս պարագաներում է, որ 12—18-րդ դարերում մայ իրավականության մեջ սկսվում են գրվել կանոնական բովանդակությամբ խրատներ:

*

*

Հայունի է, որ քրիստոնեության Ակզրնակորման առաջին դարերում քրիստոնեության գաղափարախոսությունը համընթանուր էր: Բայց ժամանակի ընթացքում, տարրեր երկրներում այն պետական կրոն դառնալուց հետո, հայաբակության զարգացման հետևանքով նկեղեցին ինքն էլ է վերակառուցվում, ազգային վաշշական կազմակերպչական իմաստով:

¹¹ Վ. Բատամեանց, «Մխիթար Գոշի Դատաստանագիրը հայոց», Եշմիածին, 1880, Նախադրությունը, էջ 10:

Հետագայում, յուրաքանչյուր ազգային նկեղեցի իր հոգելոր ազգային ծննդըն ու սովորութեանը ամրացնում է և նրան իրավական-կանոնական ուժ տալիս Սա հաշնակում է, որ նկեղեցին հանդիս է գալիք իրեակ տվյալ ազգի համախմբվածության և պետականության ամրացման համար պայքարող կենտրոնաձիգ ուժ:

Հայ իրականության մեջ նկեղեցու այս դերն առավել ևս շեշտովում է՝ կապված այն հանգամանքների հետ, որ հայ ժողովուրդը վարուց ի վեր կորցրել էր իր պետական անկախությունը, և օտարելորի մոտ նրան հավաքականորեն ներկայացնող միակ կազմակերպությունը մնացել էր նկեղեցին: Այս պայմաններում, հասկանալի է, առ իր վոր պետք է վերցներ նաև պետականության որոշ իրավունքները ու պատականությունները, պահպան հոգար ժողովուրդի ճակատութիւնը, նրա ֆիզիկական և քարոյական դիմադրության բարձրացման, ընկերային տարրեր շերտերի ծայրամեջ հակասությունների հաշտուցման և այլ խնդիրների մասին:

Այս լուրջ խնդիրների իրագործման համար էր նաև, որ դեռև 5-րդ դարից սկսած, ընդհանուր նկեղեցական օրենքները և կանոնական որոշումները խարգմաննեին, զուս ազգային-նկեղեցական ժողովներում, սահմանվում էին նաև ինքնուրույն կանոններ, որոնք ի վերջո հավաքվեցին «Կանոնագիր հայոց» ժողովածուի մեջ:

Հայոց նկեղեցու «Կանոնագիրը»-ը, հսկապական դեր է խաղացի հայ ժողովուրդի պատմական կանքում, հպատակով նրա քարոյական, դատարական, կենցաղային, ծիսական սովորութեանը մարդում, հաստատման, ժողովուրդի քաղաքական համախմբման և քագմաժիվ այլ հացերում: Սակայն, չափոր է մոռանալ, որ այս շրջանում հայ ժողովուրդը իր պատմական հայոցներում բաժան-բաժան էր եղել, ընկելնով մի շարք իրար թշնամի պետությունների գերիշխանության տակ: Այս վիճակում Հայաստանից դուրս՝ Կիլիկյան հայկական թագավորության ներսում խիստ դժվար էր իրականացնել հայ նկեղեցու կանոնների կիրառումը, մանավանդ որ կաթոլիկ և հունական նկեղեցների հրամրած երկարակությունը նորանոր խոչընդոտներ էր հարուցում հայ համապերի դեկանական հարցում մենց բուն Կիլիկիակում: Հայ նկեղեցու կանոնական իրավունքների իրագործմանը և հայ համապերի կազմակերպմանը մեծ չափով խոչընդոտում էր նաև Հայաստանում հաստատված մահմենականությունը:

Ներսէս Շնորհալին, իր Սանդարձանությունում, հակիրծ, բայց ճշմարտացի պատկերացում է տալիս այն դժվարությունների մասին, որոնք ծառացած են եղել հայ ժողովուրդի և նրա աշխարհիկ ու հոգնոր առաջնորդների առջև: Դրանցից մեծագույնը նա համարում է այն, որ հայ ժողովուրդը «ոչ ի միում աշխարհի բնակեն՝ որպէս այլոց ազգաց, զի դիրին էր շրջել առ նոս առաջնորդացն և սերմանել գրանն, այլ շատ մեղաց մեղոց ցրուեալ են ազգ մեր և ժողովուրդը ընդ ողրոս տիեզերաց ի մեջ օտարական ազգանության մեջ օտարական ազգանությունը: Նաև Աթոռու սուրբ դիմունությունը կամ առաջնորդացն առ նոս առաջնորդացն և սերմանել գրանն, այլ շատ մեղաց մեղոց ցրուեալ են ազգ մեր և ժողովուրդը ընդ ողրոս տիեզերաց ի մեջ օտարական ազգանության մեջ օտարական ազգանությունը: Տարբեր պետությունների գերիշ-

տութեանէ: ի զանազան և յամատշամ վայրու տարբերի ընդ հարկաւ և երկիրի այլասենից, և անօնական և ամենուր ի մերասերաց, որում ոչ է կար համարձակ շրջել և ուսուցանել, այլ թագնապար լիւնել որպէս զվաճապարտուք¹²: Եվ մենց այլ դժվարությունների արդյունքն է նաև այն հանգամանքը, որ Աստեմարձանությունից ընդհանունը երեք ամիս մետո գրած իր հշամավայրու «Թուրք ընդհանրական»-ին տալիս է ավելի խրատական երանգ, քան կոնդրակի, կամ կանոնական գրության բնույթը:

Շնորհալուց մետո հանգամանքները չեն փոխվել ի նպաստ հնագերի: Նույն դժվարությունների առկայության մասին է վկայում նաև Նրգմկացին, իր ամենածավալուն խրատական ստեղծագործության՝ «Նըրուառ հասարակաց...»-ի ներածականում: «Զի պարտապատ եմ քաղաք քանի քարարաց և թիր տաղանդոց և անհամար պարտուց տեսան իմ ամենառատ պարգևությունների և բարերարին...»:

Տնկագործ և պահապան ասաուածային այգույ նորա կոչեցան և զվարձն մշակութեան լիով ընկալա, և երկնաւոր տուններ և ի բանաւոր բոյս ի ծառապալան մշակությին քրիստոնէից անձանց ոչ աշխատեցա. և զի՞ն էր աշխատիլմ՝ շրջի, քարոզել, խրատել, զրարեգործութեան պտղոցն զվաճակար չարիսն և զովվարական մեղսն կորել, հատանի, զվարդապետութեան գրով որոգել, շորջ բերել և կակրացուցանել...»¹³: Բայց այս ամենը նա չի կարողացել կատարել: «Եւ արդ, զի ո՞չ կարացի առնել զգործն մշակութեան տեսան որպէս արձան էր, երէ վասն տղկարութեան մարմնոյ, և թէ վասն ժամանակի ամրութեան շարժմանց և դատութեան և թէ հակառակաւոր քարուց ումանց կամ անշուրթեանց»¹⁴:

Նրգմկացին, ինչպես և իր ժամանակին Շնորհալին, որությունից երկ է գտնում խրատական շրջաբնական գրելով, որը իր էությամբ կանոնական գրություն է: «Այլ այժմ զմուա ածի և հնարեցա թեթևացունել զլոյլով բերին իմոյ պարտուցմ՝ ի ձեռն սակաւ վճարման, և գրեցի զակաւ բան խրատուց ի կանոնական հրամանացն առաջնորդացն առաջնորդացն և աստուածագում արդյունությունը սուրբ հարցն սահմանաց, և ժողովացի զլոյլ հարցաւունեից...»¹⁵:

Նրգմկացու «Նըրատը հասարակացը» գրվել է պատմական ժամանակաշրջանում, որոշակի պայմանների թեկաղրիմամբ:

Ուշագրավ է, որ կանոնական բնույթի ունեցող խրատական գրությունները գգուն են խոսական շերկացնելու, քարոզակտության, իրավագիտության, կենցաղի այն ամենաթիմնական հարցերը, որոնք կարեւոր են համարվել տվյալ շրջանում:

Կանոնական բնույթի խրատներն ունեցել են մի այլ առավելություն ևս: Տարբեր պետությունների գերիշ-

¹² «Թուրք ընդհանրական», Ներսէսի Շնորհալույ», Էջմիածին, 1865, էջ 422:

¹³ Սատ. ձեռ. № 2223, էջ 225ա—225բ:

¹⁴ Անդ, էջ 225բ:

¹⁵ Անդ, էջ 226բ:

խանության տակ ընկած հայկական տարրեր համապնդելի առջև հաճախ ծառացի են հրատափ հարցեր, որոնց համար միշտ չէ, որ եկեղեցին ունեցել է պատրաստի կանոնական որոշումներ, մինչեւ, եզնելով կանոնների ընդհանուր ոգուց, առանձին հշանալիք անհատներ կարող են անմիջապես, ուղիղությունով ոչ վարչական միշտով, ապա խրատական գրությամբ, հարթել ծագած դժվարությունները։ Վերջապես կանոնական որոշումները, իրենց էությամբ մինդուն խիստ պահպանողական, չեն կարող հաճախ առանձնահատկությունները, ինչ որ ընդհակառակը կարող էր անել անհատը՝ արտահպտելով այն խրատների միշտով։

Խրատական գրություններում, այդ թվում նաև կանոնական բնույթի խրատներում, շեշտը դրվում էր հիմնականուն քարոյական համոզման վրա և պատահական չէ, որ բոլոր խրատագիրները, այդ թվում և կաթողիկոսները, հիշեցնում են, որ իրենք ոչ թե հրամայում, այլ խնդրում և հորդորում են¹⁶։ Բայց

¹⁶Տե՛ս Ներսես Շնորհապու Թուղթ ընդհանրականը, էջ 68, նույնը և Կոստանդին Բարձրաբերդցու խրա-

սա, ինարկն, չի հշանակում, թէ կանոնական խրատների միակ մենարանը բարոյական ներգործությունն էր։ Ազնուել, որտեղ եկեղեցին ուժու էր, բաւկանարար կանոնական խրատները, ինչպես և կանոնները պարտադրվում են իրքի օրեւնը։

Ամփոփելով վերը ապամծը, կարելի է եզրակացնել, որ 12—13-րդ և հետագա դարերում, նաև իրականության տրամադրուկ պայմաններում, կանոնական բնույթի խրատները այն համամատարար ձևուն ծակմներից մեկն են, որի շնորհիվ եկեղեցին և ըստ առանձին աշխի ընկնող գործիչները կարողանում են միշտամուխ լինել նայ հասարակությանը նույզ բազմաթիվ հարցերի, ծառայել ըստ գոյապահպանման ու գոյատևմանը։

տական թղթում, տե՛ս Լ. Խաչիկյան, Կոստանդին Բարձրաբերդցու խրատական բուղթը, առաքված Արևիկան Հայաստան, 1251 թվականին, Բանքեր Մատենադարանի, 1958, № 4, էջ 267—284։

